Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 5-ի N 294-Ա
որոշման

«ԱՐՁԱԳԱՆՔ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Արտակարգ արձագանք նոր կորոնավիրուսային վարակին
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Շվեյցարական Կարմիր խաչ
4.	Ծրագրի կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Շիրակի, Լոռու, Վայոց Ձորի մարզեր, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	22,860,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու, Շիրակի և Վայոց Ձորի մարզերի միայնակ տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, այլ խոցելի խմբերի ներկայացուցիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	15.05.2020 թ. – 31. 07. 2020 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մննդի փաթեթների և հիգիենիկ պարագաների ձեռք բերում և բաշխում՝ հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաստատված ցանկն ու տեխնիկական բնութագրերը: Նշված գործողություններն իրականացնելու համար պլանավորվում է ծախսել ընդհանուր առմամբ 22, 860,000 դրամ:

10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Լոռու, Շիրակի և Վայոց Ձորի մարզերի 1,450 միայնակ տարեցների և խոցելի խմբերի այլ ներկացուցիչների համար սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթների ձեռք բերում (17,400,000 դրամ), ախտահանիչ նյութերի և անհատական պաշտպանական միջոցների ձեռք բերում (450,000 դրամ):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսերը, այդ թվում աշխատավարձ (510,000 դրամ), տրանսպորտային ծախսեր (3,000,000 դրամ) կազմում են 3,510,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՏԻՄ-երի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Աշխատանքների ընթացքը ենթարկվելու է մշտական հսկողության ՀԿԽԸ կողմից: ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ